ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4 , հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«25» 09 2024թ.
No 01/253

«ԱՐԵՎԱՄԱՆՈՒԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՏԻԿԻՆ ՎԵՐԱ ՄԱՐՈՒՔՅԱՆԻՆ
**(հասցե՝ ք. Երևան, Հանրապետության փ. 76/2, տարածք 1,
պատճենը՝ ք. Երևան, Շենգավիթ, Արտաշիսյան փ. 45/20, 8,
էլ. փոստի հասցե՝ mushegh.lawyer@gmail.com)**

Հարգելի՛ տիկին Մարուքյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի սեպտեմբերի 24-ի ««Արևամանուկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02744/24 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 599-Ա որոշման պատճենը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հանձնաժողովին փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ **Համակարգ**) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Առդիր՝ «3» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ

Կատարող՝ Զարուհի Մելքումյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (240)

www.competition.am կայքում հրապարակման օրը՝ 30 հոկտեմբերի 2024 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 սեպտեմբերի 2024 թվականի թիվ 599-Ա

«ԱՐԵՎԱՄԱՆՈՒԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ ՀԳ-02744/24 ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի սեպտեմբերի 24-ի նիստում, քննարկելով «Արևամանուկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) վերաբերյալ թիվ ՀԳ-02744/24 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովը 2024 թվականի հունիսի 24-ի ««Արևամանուկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 355-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 355-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-02744/24 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Վարույթը հարուցված է «երեխաների զարգացման կենտրոն» և «նախակրթարան» բառերի օգտագործմամբ գործունեություն իրականացնելու առնչությամբ Ընկերության վարքագծում ինչպես առանձին, այնպես էլ համակցության մեջ անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Ընկերությունը թիվ 355-Ա որոշումն իրավաբանական հասցեով չի ստացել. ծրարը վերադարձվել է «Չի պահանջվել» նշումով, և թիվ 355-Ա որոշումը՝ կից գրությամբ, 2024 թվականի օգոստոսի 26-ին տեղադրվել է azdarar.am կայքում և Հանձնաժողովի պաշտոնական կայքում (competiton.am), ուստի թիվ 355-Ա որոշումը՝ կից գրությամբ,

2024 թվականի օգոստոսի 29-ին համարվում է Ընկերությանը պատշաճ հանձնված: Ընկերությունը 2024 թվականի սեպտեմբերի 19-ին Վարույթի առնչությամբ Հանձնաժողով է ներկայացրել գրավոր դիրքորոշում (այսուհետ նաև՝ **Դիրքորոշում**):

Ընկերությունը Դիրքորոշմամբ հայտնել է, որ դիմել է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (այսուհետ նաև՝ **Նախարարություն**), որին ի պատասխան 2024 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 03/09.1/28463-2024 գրությամբ հայտնվել է, որ կրթությանը աջակցող գործառույթ իրականացնող մանկավարժահոգեբանական աջակցության ուղղությամբ (հոգեբանական, հատուկ և սոցիալ մանկավարժական, որոնք ուղղված են խոսքի, հաղորդակցման, հուզակամային, սոցիալ-անձնային, շարժողական և ֆիզիկական զարգացման խանգարում ունեցող երեխաների զարգացմանը) գործունեություն ծավալող կազմակերպությունները լիցենզավորման ենթակա չեն: Այսինքն, Ընկերության կողմից իրականացվում է կրթությանը աջակցող հոգեբանական, հատուկ և սոցիալ մանկավարժական գործունեություն, որոնք ուղղված են խոսքի, հաղորդակցման, հուզակամային, սոցիալ-անձնային, շարժողական և ֆիզիկական զարգացման խանգարում ունեցող երեխաների զարգացմանը, ուստի նշված գործունեությունը լիցենզավորման ենթակա չէ, և Ընկերություն գործողություններում առկա չեն տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշներ: Վերոգրյալի հաշվառմամբ Ընկերությունը խնդրել է Վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահի 2024 թվականի սեպտեմբերի 18-ի «Դիտանցում իրականացնելու մասին» թիվ 411-Ա հրամանի հիման վրա 2024 թվականի սեպտեմբերի 19-ին Ընկերությանը պատկանող՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 26 ա հասցեում գործող «Արևամանուկ» կենտրոնում իրականացվել է դիտանցում, որի արդյունքում 2024 թվականի սեպտեմբերի 19-ին կազմվել է «Դիտանցման արդյունքների վերաբերյալ» թիվ 411 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 411 արձանագրություն**):

Թիվ 411 արձանագրության համաձայն՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 26 ա հասցեում գործող «Արևամանուկ» կենտրոնն ունի երկու հարկ, յուրաքանչյուր հարկն ունի սանհանգույց, դասապատրաստման համար նախատեսված սենյակներ, խաղասենյակներ, դահլիճ: Կից առկա է փոքր խոհանոց: Աշխատակցի բանավոր հայտարարության համաձայն՝ տվյալ խոհանոցը նախատեսված է աշխատակիցների և հատուկ սնունդ ընդունելու կարիք ունեցող երեխաների համար, որը պայմանավորված է տվյալ երեխաների դեղորայք ընդունելու անհրաժեշտությամբ:

Հաշվի առնելով, որ Վարույթի ժամկետը լրանում է 2024 թվականի սեպտեմբերի 24-ին, իսկ Վարույթի շրջանակում առկա փաստական հանգամանքները, առկայության դեպքում Վարույթով պատասխանողի դիրքորոշումների հաշվառմամբ վերլուծելու, անհրաժեշտության դեպքում հավելյալ տեղեկատվություն ձեռքբերելու, ինչպես նաև Վարույթի շրջանակում գործի բազմակողմանի և լրիվ քննությանն ուղղված այլ գործողություններ կատարելու համար Վարույթի իրականացման՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով (այսուհետ նաև՝ **Օրենք**) սահմանված եռամսյա ժամկետը բավարար չէ՝ Հանձնաժողովի անբարեխիղճ

մրցակցության վերահսկողության վարչությունը 2024 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ ՄՊՀ-011041 զեկուցագրով, ի թիվս այլնի, առաջարկել է Վարույթի ժամկետը 2024 թվականի սեպտեմբերի 24-ից եռամսյա ժամկետով երկարաձգել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Վարույթի ժամկետն անհրաժեշտ է եռամսյա ժամկետով երկարաձգել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2024 թվականի սեպտեմբերի 24-ից եռամսյա ժամկետով երկարաձգել «Արևամանուկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02744/24 վարույթի ժամկետը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀԻՆ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ Տ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

2024 թ. սեպտեմբերի 24
Երևան